ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Արդարադատության ակադեմիա»

պետական ոչ առևտրային կազմակերպության

ռեկտորի պաշտոնի հավակնորդ, իրավաբանական

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՍԵՐԳԵՅ ՎԱՀԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՌԱՋԱԲԱՆ 3

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 7

2.1. Մասնագիտական պատրաստում և վերապատրաստում 7

2.2. Գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքներ 12

2.3. Համագործակցություն և հանրային կապեր 14

3. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ 16

3.1. Հայեցակարգային դրույթներ 16

3.2. Իրավական բազայի կատարելագործում 17

3.3. Կազմակերպական խնդիրների լուծում 20

4. ՎԵՐՋԱԲԱՆ 21

1. ԱՌԱՋԱԲԱՆ

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Արդարադատության ակադեմիա կամ՝ Ակադեմիա) հիմնադրվել է ՀՀ Նախագահի կողմից հաստատված իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի շրջանակում՝ 2013թ. մայիսի 2-ին «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) ընդունմամբ, ՀՀ Կառավարության 2013թ. սեպտեմբերի 13-ի № 990-Ա որոշմամբ: Ակադեմիայի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Արդարադատության ակադեմիան իր բուն գործունեությունն սկսել է 2014 թվականի հունվարի 1-ից:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ դատական օրենսգրքով, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ, Ակադեմիայի կառավարման խորհրդի որոշումներով, այլ իրավական ակտերով և համագործակցության հուշագրերով ու համաձայնագրերով, Ակադեմիան, իր գործունեության նպատակների և խնդիրների կենսագործման ուղղությամբ՝

- **կազմակերպում և անցկացնում է** որակավորման ստուգման արդյունքներով դատավորների թեկնածուների հավակնորդների (այդ թվում՝ Արցախի Հանրապետությունից), դատախազների (այդ թվում՝ Արցախի Հանրապետությունից) և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց **մասնագիտական պատրաստում**,
- **կազմակերպում և անցկացնում է** դատավորների (այդ թվում՝ Արցախի Հանրապետությունից), դատախազների (այդ թվում՝ Արցախի Հանրապետությունից), ՀՀ

քննչական կոմիտեի և ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների, Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածուների ցուցակում գտնվող անձանց, ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի քննիչների **վերապատրաստում**,

- **կազմակերպում և անցկացնում է** դատական ծառայողների (այդ թվում՝ Արցախի Հանրապետությունից և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից), ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների, ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայողների և դատական կարգադրիչների **վերապատրաստում**,
- **կազմակերպում է** դատավորների, դատախազների, քննիչների և դատական կարգադրիչների **հատուկ ուսուցում**՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով,
- **կնքում է պայմանագրեր և համագործակցում** Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա **իրավաբանական ու ֆիզիկական անձանց, միջազգային կազմակերպությունների** հետ,
- **մշակում և շրջանառության մեջ է դնում ուսումնամեթոդական նյութեր**՝ Օրենքով նախատեսված կրթական ծրագրերի իրականացման համար,
- **կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության տեսակներ**՝ իր գործունեության նպատակներին համապատասխան:

Ձևավորելով Արդարադատության ակադեմիայի ռեկտորի հավակնորդի սույն ծրագիրը՝ հարկ է նշել, որ դրա իրականացումը միտված է այն գործընթացների տրամաբանական շարունակությանը, որոնք սկիզբ են առել կառույցի գործունեության նախորդ տարիների ընթացքում: Մասնավորապես, հիմնադրման օրվանից Ակադեմիայի զարգացման ուղղությամբ՝

– պարբերաբար և հետևողականորեն կատարելագործվել են կրթական ծրագրերը և ուսումնական պլանները.

- դասավանդվող առարկաների հիմնական մասով մշակվել և հրատարակվել են ուսումնաօժանդակ նյութեր (մենագրություններ, գիտագործնական մեկնաբանություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, խնդրագրքեր, հեռաուսուցման փաթեթներ և այլն).
- ուսումնական, գիտահետազոտական և ծրագրամեթոդական գործունեության առավել արդյունավետ կազմակերպման, պլանավորման և կառավարման նպատակներով ստեղծվել է ռեկտորին կից գործող կոլեգիալ մարմին՝ Գիտական խորհուրդ.
- հայրենական և արտասահմանյան գիտնականների և մասնագետների՝ իրավագիտության և հարակից այլ մասնագիտությունների տեսական ու գործնական հիմնախնդիրներին վերաբերող հոդվածների, ինչպես նաև Ակադեմիայի կազմակերպած գիտաժողովների և նմանաբնույթ այլ միջոցառումների նյութերի հրատարակման նպատակով հիմնադրվել է «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսը, որը ներառվել է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ընդունելի համարվող պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում.
- առաջավոր փորձի փոխանակման և փոխշահավետ համագործակցության ապահովման, այդ կապակցությամբ օտարերկրյա պետությունների համանման կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների ձևավորման և զարգացման նպատակով ստորագրվել են համագործակցության համաձայնագրեր և փոխըմբռնման հուշագրեր.
- աշխատանքային կարգապահության և կրթական գործընթացների (այդ թվում՝ ունկնդիրների հաճախումների) նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով ներդրվել է էլեկտրոնային անցակետային համակարգ.
- կատարվել են նաև քննական գործընթացների համակարգչայնացման, գրադարանային ֆոնդի ընդլայնման, Ակադեմիայի գործունեության հրապարակայնության

ապահովման և հասարակայնության հետ կապերի զարգացման ու ամրապնդման, աշխատակիցների հաստիքացուցակի օպտիմալացման և աշխատավարձերի պարբերական բարձրացման, Ակադեմիայի վարչական շենքի ու հարակից տարածքների բարեկարգման հետ կապված և այլ աշխատանքներ:

Այսօր՝ 2021 թվականի հունիսի դրությամբ, բավարար հիմքեր կան պատասխանատու հայտարարելու, որ նախկինում առաջ քաշված միջնաժամկետ ռազմավարական նպատակներն իրականացվել, իսկ դրանցով պայմանավորված խնդիրները լուծվել են գրեթե ամբողջ ծավալով:

Արդարադատության ակադեմիայի 2021-2026թթ. ընթացիկ գործունեությունը ղեկավարելու նպատակով ռեկտորի պաշտոնում ընտրվելու դեպքում իմ գործունեության ուղղությունների, բովանդակության և Ակադեմիայի զարգացման հեռանկարների կապակցությամբ հարկ եմ համարում հաջորդիվ ներկայացնել մասնագիտական պատրաստման և վերապատրաստման, փորձաշրջանի, գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների, համագործակցության և հանրային կապերի կազմակերպման ու իրականացման, ինչպես նաև իրավական համապատասխան բազայի կատարելագործման և կազմակերպական որոշ խնդիրների լուծման վերաբերյալ ծրագրային հետևյալ դրույթները:

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Մասնագիտական պատրաստում և վերապատրաստում

1. Դատավորների թեկնածուների հավակնորդների, քննիչների և դատախազների թեկնածությունների, Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:

«Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **մասնագիտական պատրաստումը** դատավորների թեկնածուների հավակնորդների, քննիչների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց, Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակում ընդգրկված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձանց ուսուցումն է՝ ուղղված վերջիններիս մեջ դատավորի, քննիչի կամ դատախազի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը:

Մասնագիտական պատրաստման արդյունավետության բարձրացմանն էապես կնպաստի հետևյալ խնդիրների հետևողական լուծումը.

- ✓ բուհերի ավարտական կուրսերի ուսանողների շրջանում դատավորի, դատախազի կամ քննիչի մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության առաջացում.
- ✓ որակավորման ստուգման մրցույթներին (ընդունելությանը) մասնակցելու փորձերի քանակի սահմանափակում՝ առավելագույնը երեքով.
- ✓ որակավորման ստուգման մրցույթներին դիմորդների մասնակցության արդյունավետության բարձրացման նպատակով նախապատրաստական դասընթացների կազմակերպում և իրականացում.

- ✓ ուսուցման գործընթացում գործող դատավորների, դատախազների և քննիչների, հատկապես՝ Ակադեմիայի շրջանավարտների ակտիվ ներգրավում.
- ✓ ունկնդիրների մեջ որպես դատավոր, դատախազ կամ քննիչ գործելու համար անհրաժեշտ՝ հատկապես հետևյալ հմտությունների և կարողությունների ձևավորում՝
  1) դատավորի, դատախազի և քննիչի մասնագիտական էթիկայի և վարքագծի կանոնների պահպանում,
  2) գործի փաստական հանգամանքների բազմակողմանի վերլուծություն,
  3) կայացվող որոշման պատշաճ պատճառաբանում և շարադրում (հիմնվելով ոչ միայն օրենքի տառի, այլև որոշման համատեքստի, ողջամտության և կատարման հնարավորության վրա),
  4) դատավարության մասնակիցների հետ երկխոսելու ունակության զարգացում.
- ✓ գլխավորապես ուսուցման ինտերակտիվ և փորձահեն հետևյալ մեթոդների կիրառում՝
  1) պրակտիկ իրավիճակների վերլուծություն, որի պարագայում ուսուցման առարկայական ծրագրով նախատեսված յուրաքանչյուր թեմայի կապակցությամբ առանձնացվում և քննարկման են ներկայացվում վերաբերելի դատավարական փաստաթղթեր,
  2) ուսումնական դատական նիստերի, քննչական գործողությունների կազմակերպում և իրականացում[1],
  3) դատավարական տարբեր փաստաթղթերի նախագծերի կազմում և դասընթացավարների հետ դրանց քննարկում,
  4) դատավարության մասնակիցների, ՄԻՊ-ի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ՀԼՄ-ների հետ հարաբերությունների առանձնահատկությունների քննարկում,

[1] Խոսքը դատական նիստերի, քննչական գործողությունների ձևացման (իմիտացիայի, սիմուլյացիայի) կիրառմամբ և հատուկ մշակված մեթոդներով իրականացվող ուսումնական գործընթացի մասին է:

5) քննությունների և գիտելիքների ստուգման այլ եղանակների արդյունքների ամփոփում և ունկնդիրների հետ դրանց քննարկում.

- ✓ փորձաշրջանի վայրն ընտրելիս ունկնդրի ցանկության հաշվառում՝ հիմք ընդունելով նրա առաջադիմությունը, բնակության վայրը, ընտանեկան և այլ հանգամանքները.
- ✓ փորձաշրջանի՝ լսարանային ուսուցմանը զուգընթաց կազմակերպում և ըստ շաբաթվա օրերի բաշխում.
- ✓ փորձաշրջանի կազմակերպում ոչ միայն դատարաններում կամ դատախազություններում կամ քննչական մարմիններում, այլև քրեակատարողական ծառայությունում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, բանկերում, առևտրային կազմակերպություններում.
- ✓ փորձաշրջանի արդյունքների ամփոփման հիման վրա ավարտական քննության նախատեսում (երկու փուլով՝ 1) դատավարական համապատասխան փաստաթղթի նախագծի կազմում և 2) հարցազրույց).
- ✓ ուսումնառության ավարտից հետո յուրաքանչյուր շրջանավարտի վերաբերյալ բնութագրի կազմում և համապատասխան կառույց դրա ներկայացում:

Մասնագիտական պատրաստման ոլորտում Ակադեմիայի գործունեության նպատակներն առավել արդյունավետ կենսագործելու անհրաժեշտությամբ պայմանավորված, առաջարկվում է նաև բարեփոխել ունկնդիրների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացները, ինչպես նաև դրանց կազմակերպումն ու իրականացումը: Մասնավորապես.

1. Հաշվի առնելով, որ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի համաձայն, Ակադեմիայում մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող բոլոր առարկայական կուրսերի արդյունքները գնահատվում են միայն քննությունների միջոցով, որոնց կազմակերպումն ու անցկացումը ուսումնական գործընթացում որոշակի խնդիրներ ու դժվարություններ է առաջացնում, առաջարկվում է սահմանել բանավոր ստուգարքների և եզրափակիչ քննությունների միջոցով ամ-

փոփվող առարկայական կուրսերի նախատեսման հնարավորություն: Այս ընթացակարգի ներդնումը կնպաստի ունկնդիրների ուսուցման, գիտելիքների ստուգման և գնահատման, ինչպես նաև դրանց կազմակերպման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

2. Առաջարկվում է փոփոխության ենթարկել գնահատման և բողոքարկման հանձնաժողովների անդամների թվային հարաբերակցությունը: Մասնավորապես, դատավորների թեկնածուների հավակնորդների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում՝
   - ✓ դասավանդվող առարկայական կուրսերի արդյունքները գնահատելու համար ձևավորվող ***գնահատման հանձնաժողովներում*** համապատասխան մարմինների կողմից նշանակված ***հինգական*** դատավորի կամ դատախազի և գիտության համապատասխան բնագավառի ***երկուական*** մասնագետի հարաբերակցությունը փոխել՝ դարձնելով համապատասխանաբար ***չորսական*** դատավոր կամ դատախազ, գիտության համապատասխան բնագավառի ***երկուական*** մասնագետ և Ակադեմիայի ***մեկական*** ներկայացուցիչ,
   - ✓ քննությունների արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորվող ***բողոքարկման հանձնաժողովներում*** համապատասխան մարմինների կողմից նշանակված ***երկուական*** դատավորի կամ դատախազի և գիտության համապատասխան բնագավառի ***մեկական*** մասնագետի հարաբերակցությունը փոխել՝ դարձնելով համապատասխանաբար ***մեկական*** դատավոր կամ դատախազ, գիտության համապատասխան բնագավառի մասնագետ և Ակադեմիայի ներկայացուցիչ (ռեկտոր կամ պրոռեկտոր):

   Այս կարգավորումները նպատակ են հետապնդում նշված հանձնաժողովներում ապահովել որոշումների կայացման ընթացքում գիտության բնագավառի և Ակադեմիայի ներկայացուցիչների ու համապատասխան մարմինների նշանակած անդամների հարաբերական հավասարակշռումը:

3. Նշված նպատակների իրագործման կապակցությամբ առաջարկվում է նաև ընդլայնել Ակադեմիայի կառավարման խորհրդին վերապահված լիազորությունները:

Մասնավորապես՝ Խորհրդի հաստատմանը վերապահել ստուգարքների, լրացուցիչ ստուգարքների, եզրափակիչ քննությունների, լրացուցիչ եզրափակիչ քննությունների, ստուգարքների և եզրափակիչ քննությունների վերահանձնման կազմակերպման, անցկացման կարգն ու պայմանները, քննությունների, եզրափակիչ քննությունների անցկացման ժամանակացույցը, քննությունների, լրացուցիչ քննությունների բողոքարկման կարգը, եզրափակիչ քննությամբ ավարտվող պարտադիր և այլընտրանքային քննական առարկայական կուրսերը:

2. Դատավորների, քննիչների, դատախազների, դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց, դատական ծառայողների, քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների, դատախազությունում պետական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստում:

«Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **վերապատրաստումը** դատավորների, քննիչների, դատախազների, դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց, դատական ծառայողների, քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների, դատախազությունում պետական ծառայողների և դատական կարգադրիչների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման համար կոնկրետ ոլորտների ուսումնասիրության միջոցով կազմակերպվող պարտադիր ուսումնական գործընթացն է[1]:

Վերապատրաստման արդյունավետության բարձրացմանն էապես կնպաստի հետևյալ խնդիրների հետևողական լուծումը.

- ✓ պարտադիր վերապատրաստման՝ Օրենքով սահմանված նվազագույն և առավելագույն ժամկետների կրճատում.

[1] Հանրային ծառայության ոլորտը կարգավորող օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ դատական ծառայողները, քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողները և դատախազությունում պետական ծառայողներն այլևս Ակադեմիայի ունկնդիրներ չեն:

- ✓ վերապատրաստման լրացուցիչ դասընթացներին մասնակցությունը (որակավորման բարձրացումը)՝ որպես առաջխաղացման հարցի քննարկման ընթացքում հաշվի առնվող չափանիշներից մեկի նախատեսում.
- ✓ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանցից բացի, նաև Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դեռևս չնշանակված դատախազների ու քննիչների թեկնածուների համար պարտադիր վերապատրաստման մասնակցելու պահանջի սահմանում.
- ✓ ուսուցման գործընթացում իրավագիտության և հարակից համապատասխան այլ ոլորտների (փիլիսոփայության, հոգեբանության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության, բժշկության և այլն) ներկայացուցիչ հանդիսացող տեսաբան-գիտնականների, այլ մասնագետների (այդ թվում՝ արտասահմանյան երկրներից) ակտիվ ներգրավում.
- ✓ դատական ծառայողների, քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների, դատախազությունում պետական ծառայողների պարտադիր վերապատրաստումների՝ Ակադեմիայի շրջանակներում կազմակերպում, դրա հետ կապված օրենսդրական հակասությունների վերացում.
- ✓ յուրաքանչյուր ուսումնական ծրագրի ավարտից հետո Ակադեմիայում ուսուցումն անցած ունկնդիրների ուսումնառության արդյունքների վերաբերյալ համապատասխան կառույցներին, ամփոփ տեղեկանքից բացի, նաև Կառավարման խորհրդի սահմանած ձևաչափով բնութագրի ներկայացնում:

2.2. Գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքներ

Ակադեմիայում գիտական հետազոտությունների, գիտական և ուսումնական հրատարակությունների, գիտահետազոտական այլ կազմակերպությունների կամ կառույցների հետ համագործակցության, ուսուցման ծրագրերի, դասավանդման սեղմագրերի և այլ ուսումնամեթոդական նյութերի մշակման և շարունակական նորացման աշխատանք-

ների իրականացումն ապահովում է Գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժինը:

Գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների արդյունավետության բարձրացմանն էապես կնպաստի հետևյալ խնդիրների հետևողական լուծումը.

- ✓ գործընկերների (այդ թվում՝ օտարերկրյա) մասնակցությամբ գիտագործնական նշանակություն ունեցող արդիական թեմաներով գիտաժողովների, աշխատաժողովների, սեմինարների, համատեղ հետազոտությունների կազմակերպում և իրականացում, դրանց արդյունքների հրապարակում և ուսուցման գործընթացում օգտագործում.
- ✓ «Բանբեր արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի՝ որպես վիճելի, խնդրահարույց, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող հարցերի քննարկման, այդ կապակցությամբ տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող կարծիքների արտահայտման հարթակի օգտագործման համար անհրաժեշտ պայմանների կատարելագործում.
- ✓ ուսուցման ծրագրերով նախատեսվող դասընթացների համար ուսումնական և մեթոդական նյութերի (մենագրությունների, ձեռնարկների, ուղեցույցների, մեկնաբանությունների, խնդրագրքերի և այլն) մշակում, Ակադեմիայի գիտական խորհրդում քննարկում ու վերջինիս երաշխավորությամբ դրանց հրատարակում և ուսուցման գործընթացում օգտագործում.
- ✓ օտարերկրյա համանման կառույցների հետ ուսուցման ծրագրերի կազմմանը, նոր դասընթացների մշակմանը, դասավանդման մեթոդների կատարելագործմանը, դասընթացավարների պատրաստմանը և վերապատրաստմանն ուղղված դրական փորձի փոխանակում, այդ նպատակով ճանաչողական ու աշխատանքային այցերի կազմակերպում և իրականացում.

- ✓ պահանջվող տեղեկատվության որոնման, մշակման և վերլուծության, խնդիրների վերհանման և լուծման հնարավոր առավել արդյունավետ տարբերակների ընտրության, ինչպես նաև ճգնաժամային իրավիճակներում ինքնուրույն և թիմային աշխատանքի կազմակերպման հմտությունների և կարողությունների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ու կենսագործման համար անհրաժեշտ պայմանների ապահովում.
- ✓ արդարադատության ոլորտի ներկայացուցիչների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման նպատակով իրականացվող միջազգային ծրագրերի համար նախատեսված դրամաշնորհների ներգրավմանն ուղղված գործուն միջոցների ձեռնարկում:

2.3. Համագործակցություն և հանրային կապեր

Ակադեմիան, իր գործունեության նպատակների և խնդիրների կենսագործման ուղղությամբ մեծապես կարևորելով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման արդի միտումները, հրապարակայնության, թափանցիկ գործելաոճի, հանրայնացմանն ուղղված միջոցառումների շարունակական աճի, հասարակայնության հետ կապերի զարգացման ապահովումը, իրականացնում է նաև հետևյալ աշխատանքները՝

- հայաստանյան, արցախյան, օտարերկրյա և միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատում և ընդլայնում,
- տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների և լրագրողների հետ հաղորդակցության կազմակերպում,
- Ակադեմիայի կողմից կամ նրա մասնակցությամբ կազմակերպված աշխատանքների և ծրագրերի վերաբերյալ հանրության իրազեկմանն ուղղված տեղեկատվական փաթեթների մշակում, թարգմանում և տարածում,
- համացանցային պաշտոնական կայքէջի սպասարկում,

– հասարակայնության հետ կապերի զարգացում և ամրապնդում:

Համագործակցության և հանրային կապերի ապահովմանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացմանն էապես կնպաստի հետևյալ խնդիրների հետևողական լուծումը.

- ✓ օտարերկրյա համանման այլ կառույցների (հատկապես ԵՄ երկրները ներկայացնող), ՀՀ բուհերի (այդ թվում՝ Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի, ԵՊՀ լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոնի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի), ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ համագործակցության հաստատում և ընդլայնում.
- ✓ Ակադեմիայի գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովմանն ուղղված աշխատանքների առավել ակտիվացում.
- ✓ Ակադեմիայի վարկանիշն ու հեղինակությունը, հրապարակվող տեղեկատվության դիտելիությունը բարձրացնելու ուղղությամբ հետևողական ամենօրյա աշխատանքի իրականացում.
- ✓ տեղեկատվական դաշտում Ակադեմիայի տեղի և դերի ամրապնդման, պաշտոնական կայք-էջի շարունակական զարգացման, գործառութային համալրման և բարելավման ապահովում.
- ✓ սոցիալական հարթակներում Ակադեմիայի էջերի ակտիվացում, այդ նպատակով տեքստային նյութերին զուգահեռ նաև որակյալ տեսալսողական տեղեկատվության ստեղծում, մշակում և մեդիայի միջոցով տարածում:

3. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

3.1. Հայեցակարգային դրույթներ

Ակադեմիայի շարունակական զարգացման ապահովմանն էապես կնպաստի հետևյալ խնդիրների հետևողական լուծումը.

- ✓ Ակադեմիային որպես որակավորման ստուգման առաջին (գրավոր) փուլի կազմակերպման և իրականացման համար պատասխանատու մասնագիտացված կազմակերպության նախատեսում.
- ✓ դատավորի օգնականի առնվազն հինգ տարվա ստաժ ունեցող դիմորդների համար դատավորների թեկնածուների հավակնորդների շարքերը համալրելու հեշտացված կարգի սահմանում.
- ✓ հեռավար ուսուցման հետևյալ հիմնական ուղղություններով կատարելագործում՝
  - հեռաուսուցման դասընթացների քանակի ավելացում, որը ենթադրում է ոչ միայն նորերի մշակում, այլև առկա ուսուցման համար նախատեսվածների փոխակերպում,
  - խաղաֆիկացման ձևաչափով թվային դասընթացների մշակում և ուսումնական գործընթացում դրանց նախատեսում,
  - վիրտուալ դատարանի ստեղծում և ուսուցման գործընթացում դրա օգտագործման ապահովում.
- ✓ արտաբյուջետային ֆինանսական միջոցներ ներգրավելու և Ակադեմիայի զարգացմանը դրանք ուղղելու անհրաժեշտությամբ պայմանավորված, Կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակների իրականացման խթանում՝
  1) հրատարակչական, տպագրական աշխատանքներ և դրանց արդյունքների իրացում,
  2) արդարադատության իրականացմանը նպաստող մասնագիտությունների համար վերապատրաստման ծրագրերի իրականացում, մասնավորապես՝

- գիտաժողովների, սեմինարների, դասընթացների կազմակերպման վճարովի ծառայությունների մատուցում,
- Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի և ԵՊՀ լեզուների ուսուցման ու թեստավորման կենտրոնի հետ համագործակցությամբ՝ մասնագիտական օտար լեզուների (անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն) վճարովի ուսուցում.

✓ միջազգային մասնագիտական, կրթական և գիտական միավորումներում Ակադեմիայի մասնակցության (անդամակցության) ընդլայնում.

✓ Ակադեմիայի աշխատակազմի, ունկնդիրների և գործընկերների մասնակցությամբ մարզական ու մշակութային միջոցառումների կազմակերպում և իրականացում:

3.2. Իրավական բազայի կատարելագործում

«Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության ներկայումս գործող օրենքն ընդունվել է 2013 թվականի մայիսի 2-ին և, կապված պետական ու հասարակական կյանքում տեղի ունեցած և շարունակվող բարեփոխումների հետ, այն կարիք ունի էական փոփոխությունների: Այս համատեքստում անհրաժեշտ է օրենքը համադրելի դարձնել այժմյան զարգացումներին և արդեն փոփոխված կամ նոր ընդունված կամ ընդունման փուլում գտնվող օրենքներին: Օրենքով անհրաժեշտ է հստակեցնել մի շարք դրույթներ և ներառել նոր կարգավորումներ:

Առաջարկվող փոփոխությունների և լրացումների ծավալը մեծ է, ինչի պատճառով գործող օրենքում դրվագային փոփոխություններ և լրացումներ կատարելը չի կարող հաղթահարել առկա վիճակը: Ակադեմիայի մասին օրենքն անհրաժեշտ է համապատասխանեցնել արդի զարգացումներին և հայեցակարգային նոր լուծումներին, վերացնել դրա և այլ օրենքների միջև առկա և ակնկալվող խզումներն ու հակասությունները:

Այսպես, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի կիրարկման ընթացքում ի հայտ են եկել Արդարադատության ակադեմիայում ուսումնական գործընթա-

ցին առնչվող հարաբերությունները իրավական փակուղի տանող բազմաթիվ խնդիրներ ու բարդություններ, որոնք, մասնավորապես, դրսևորվել են՝

- ✓ ունկնդիրների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերին վերաբերող հարցերը կարգավորող իրավադրույթներում,
- ✓ Արդարադատության ակադեմիայի կառավարման և ղեկավարման մարմինների գործունեության կարգն ու լիազորությունները սահմանող իրավակարգավորումներում,
- ✓ քննությունների կազմակերպման, անցկացման և դրանց արդյունքների բողոքարկման հարաբերությունները կարգավորող իրավադրույթներում,
- ✓ ունկնդիրներին տարկետում տրամադրելու հարաբերությունները կարգավորող իրավադրույթների բացակայության մեջ և այլն:

Ոլորտային օրենսդրությունում կատարված և ակնկալվող փոփոխությունները բովանդակային խզում են մտցրել վերջիններիս և «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների միջև: Մասնավորապես, Դատախազության աշխատակազմի, Քննչական կոմիտեի աշխատակազմի, Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի մի շարք պետական ծառայողներ այժմ համարվում են քաղաքացիական ծառայողներ և ենթակա չեն վերապատրաստման Արդարադատության ակադեմիայում, մինչդեռ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը նշված անձանց նախատեսում է որպես Արդարադատության ակադեմիայի ունկնդիրներ:

Նմանատիպ խզում առկա է նաև «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի և «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի միջև: Այսպես, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի 37-րդ հոդվածի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վերապատրաստումն իրականացնում է Արդարադատության ակադեմիան, սակայն դեռևս անհրաժեշտ փոփոխություններ չեն կատարվել «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքում և դեռևս ներկայացված չէ համապատասխան օրենքի փոփոխության նախագիծ:

«Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո դրանում շուրջ տասնհինգ անգամ կատարվել են փոփոխություններ և/կամ լրացումներ: Հանրապետությունում կատարվող դատաիրավական լայնամասշտաբ փոփոխությունների արդյունքում ևս «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը անխուսափելիորեն պետք է ենթարկվի կոնցեպտուալ փոփոխությունների և լրացումների:

Վերը թվարկված գործոնների ամբողջությունը, ինչպես նաև դատաիրավական լայնածավալ փոփոխությունները ներկայումս հանգեցրել են այնպիսի մի իրավիճակի, որի պայմաններում 2013 թվականին ընդունված «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքն իր տրամաբանությամբ, կառուցվածքով, ներուժով և տարատեսակ հատվածական փոփոխություններով օբյեկտիվորեն ի վիճակի չէ ապահովելու Արդարադատության ակադեմիայի նպատակների և դրանցից բխող գործառույթների ամբողջ ծավալով պատշաճ իրականացումը: Ընդ որում, հայեցակարգային փոփոխություններ կատարելը և «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի ու հարակից օրենքների իրավակարգավորումների միջև խզումը վերացնելը հնարավոր են միայն նոր օրենքի ընդունմամբ, քանզի հայեցակարգային մեկ դրույթի փոփոխությունը հանգեցնելու է բազմաթիվ նորմերի և ամբողջ օրենքի տրամաբանության փոփոխության:

Այսպիսով, Արդարադատության ակադեմիայի մասին նոր օրենքի ընդունմամբ ակնկալվում է ունենալ հայեցակարգային հիմքերի վրա հիմնված նորմատիվ իրավական ակտ, որը թույլ կտա ապահովել Արդարադատության ակադեմիայի իրավական կարգավիճակից, նպատակներից և գործառույթներից բխող լիազորությունների պատշաճ իրականացումը: Ուստի, անցած տարիների ընթացքում ունեցած արդյունքների ամփոփման, պրակտիկայի վերլուծության և օրենքում առկա բացերի ուղղման տրամաբանական ավարտը պետք է լինի հայեցակարգային հիմքերի վրա հիմնված, դատաիրավական բարեփոխումների ժամանակակից միտումներին համահունչ նոր օրենքի ընդունումը:

3.3. Կազմակերպական խնդիրների լուծում

Ակադեմիայի գործունեության արդյունավետության բարձրացմանն էապես կնպաստի նաև կազմակերպական բնույթի հետևյալ խնդիրների հետևողական լուծումը.

- ✓ Ակադեմիայի կողմից կազմակերպվող և իրականացվող գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով դասընթացավարների և ունկնդիրների շրջանում անանուն հարցումների անցկացում, դրանց արդյունքների ամփոփում և քննարկում, ինչպես նաև աշխատակազմի ատեստավորման համակարգի մշակում և ներդնում,
- ✓ էլեկտրասնուցման հավանական խափանումներով, տատանումներով կամ անջատումներով պայմանավորված խնդիրներից խուսափելու նպատակով էլեկտրական էներգիայի այլընտրանքային աղբյուրների (պահուստային մալուխագիծ, գեներատոր) գործարկում,
- ✓ ջեռուցման համակարգի բարելավում, համապատասխան սարքավորումների՝ բնական մաշվածությամբ պայմանավորված փոխարինում,
- ✓ տեսողության, լսողության, տեղաշարժման սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար Ակադեմիայի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծում և կենսագործում,
- ✓ Ակադեմիայի գործունեության հիմնական ուղղություններին և առանձնահատկություններին ծանոթացման նպատակով լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և այլ հետաքրքրվողների հետ հանդիպումների («բաց դռների» օրերի) կազմակերպում,
- ✓ պետական կառավարման, գիտության, մշակույթի, սպորտի և այլ ոլորտների ճանաչված ներկայացուցիչների հետ ունկնդիրների հանդիպումների նախաձեռնում և կենսագործում:

4. ՎԵՐՋԱԲԱՆ

Ամփոփելով ռեկտորի պաշտոնում ընտրվելու դեպքում իմ գործունեության ուղղություններին, բովանդակության և Ակադեմիայի զարգացման հեռանկարների կապակցությամբ մասնագիտական պատրաստման և վերապատրաստման, փորձաշրջանի, գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների, համագործակցության և հանրային կապերի կազմակերպման ու իրականացման, ինչպես նաև իրավական համապատասխան բազայի կատարելագործման և կազմակերպական որոշ խնդիրների լուծման վերաբերյալ վերը ներկայացված ծրագրային դրույթները՝ հարկ է նշել.

- ✓ նախընտրական սույն ծրագրի իրականացումը միտված է այն գործընթացների տրամաբանական շարունակությանը, որոնք սկիզբ են առել կառույցի գործունեության նախորդ տարիների ընթացքում.
- ✓ մասնագիտական պատրաստման արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկվում է հատկապես հետևյալ խնդիրների հետևողական լուծումը՝
  - գլխավորապես ուսուցման ինտերակտիվ և փորձահեն մեթոդների (այդ թվում՝ դատական նիստերի, քննչական գործողությունների սիմուլյացիաների) կիրառում,
  - ունկնդիրների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացների բարեփոխում,
  - փորձաշրջանի կազմակերպում ոչ միայն դատարաններում կամ դատախազություններում կամ քննչական մարմիններում, այլև քրեակատարողական ծառայությունում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, բանկերում, առևտրային կազմակերպություններում.
- ✓ վերապատրաստման գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկվում է հատկապես հետևյալ խնդիրների հետևողական լուծումը՝
  - պարտադիր վերապատրաստման՝ Օրենքով սահմանված նվազագույն և առավելագույն ժամկետների կրճատում, իսկ լրացուցիչ դասընթացներին մասնակ-

ցությունը՝ որպես առաջխաղացման հարցի քննարկման ընթացքում հաշվի առնվող չափանիշներից մեկի նախատեսում,

- դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանցից բացի, նաև Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դեռևս չնշանակված դատախազների ու քննիչների թեկնածուների համար պարտադիր վերապատրաստման մասնակցելու պահանջի սահմանում.

✓ հեռավար ուսուցման արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկվում է հատկապես հետևյալ խնդիրների հետևողական լուծումը՝

- հեռաուսուցման դասընթացների քանակի ավելացում (ինչպես նորերի մշակում, այնպես էլ առկա ուսուցման համար նախատեսվածների փոխակերպում),
- խաղաֆիկացման ձևաչափով թվային դասընթացների մշակում և ուսումնական գործընթացում դրանց նախատեսում.

✓ գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկվում է հատկապես հետևյալ խնդիրների հետևողական լուծումը՝

- գործընկերների մասնակցությամբ գիտագործնական նշանակություն ունեցող արդիական թեմաներով գիտաժողովների, աշխատաժողովների, սեմինարների, համատեղ հետազոտությունների կազմակերպում և իրականացում, դրանց արդյունքների հրապարակում և ուսուցման գործընթացում օգտագործում,
- օտարերկրյա համանման կառույցների հետ ուսուցման ծրագրերի կազմմանը, նոր դասընթացների մշակմանը, դասավանդման մեթոդների կատարելագործմանը, դասընթացավարների պատրաստմանը և վերապատրաստմանն ուղղված դրական փորձի փոխանակում, այդ նպատակով ճանաչողական ու աշխատանքային այցերի կազմակերպում և իրականացում:

Ռեկտոր պաշտոնի հավակնորդ **Ս.Վ. Առաքելյան**